

Վահանի խնդիրն առ նուազն երկրայական է, եւ կարելի չէ արդէն այս պարագան իբր փաստ կիրարկել սակայն ստոյգ է, որ Չորոփորեցւոյ յիշած Ներսեհը՝ կամսարական չէ, այլ իշխան Վրաց եւ փեսայ կամսարականաց, որով կը խախտի Տէր-Մովսէսեանի վարկածը: Լեզուական եւ պատմական ուրիշ պատճառներ կը հակառակին Չորոփորեցւոյ եւ գր. Արշարունոյ նոյնացման (Հմմ. Խալաթեան, Խորենացւոյ նորագոյն աղբիւրների մասին, էջ 4—9): Անսոյգ է Գրիգորիսի մահուան թուականը: Տէր-Մովսէսեան 713 կը նշանակէ, որ, եթէ գաւազագրքին վրայ հիմնուած է, սխալ է, քանի որ գաւազանագրքին հեղինակը 713 ին կ'աւարտէ իր գրութիւնը եւ զդրիգորիս կ'ենթադրէ տակաւին եպիսկոպոսական աթոռին վրայ: Մանազկերտի ժողովին (726) կը մասնակցի Գրիգորիս Արշարունեաց Քորեպիսկոպոս (Ակինեան, ՀԱ. 1905, 216, գիրք Թղթոց, 223) “Փիլիսոփոս” (Գ. թ. 232): Արդեօք մեր Գրիգորիսն է: Գժուար է պնդել:

Գրիգորիս՝ Արշարունեաց եւ կամսարական տան վերջին եպիսկոպոսը չէ, օրովհետեւ կամսարական տունը կը շարունակէ իշխել մինչեւ Հ. դարու վերջը, բայց չեն հասած մեզի Գրիգորիսի յաջորդներուն անունները: Ֆ. դարուն ծանօթ են Արշարունի երեք եպիսկոպոսներ (Ասոլ. Գ. թ. Ալիշան, Այր. 56), բայց անոնք չեն եպիսկոպոս “Տան կամսարականացն”:

Հ. Ս. ԿՈԴԵԱՆ



## ՅԻՐԱԿԻ ԶՐԱՆՑՔ ՓԼ\*

ՀԵՏԵԶՕՏՈՒԹԻՒՆ

Գրեթէ մի տարի առաջ Հայաստանի Խորհրդային կառավարութիւնը սկսեց մի այնպիսի հսկայական գործ, որի նմանը չի կատարուել Հայաստանի եւ ոչ մի անկիւնում 1030 թուից սկսեալ մինչեւ մեր օրերը: Ճշմարիտ է Թիֆլիզ

\* Համոյուր կը հատարակենք մեր բազմավաստակ գրող ԱԺՐՊԵՏԻ հետեւնալ նկարագրութիւնը Շիրակի ջրանցքի մասին, որ մե եւ նոյն ժամանակ կը սկրայացնէ միզի այս մեծ ոգեւորութիւնը, երկրի վերաշնուրեան այս մեծ հանդապառութիւնը, որ կ'իշխէ ներկայի խորհրդ. Հայաստանի մէջ: Դաքրու ընթացքին օտար տիրապետութեանց տակ աւերտած, կեղե-

— ջուլֆա երկաթուղին, որ շինուեց 1900—1905 թ., այս ջրանցքից անհամեմատ մեծ գործ է, բայց դա յատկապէս ջարի կառավարութիւնը ուղմական, ոչ թէ հասարակական տեսակէտով կառուցել տուեց: Արդէն 111 տարին լրացաւ, որ Արեւելեան Շիրակը Գիւմրի աւանով զըտնումէր Ռուսական պետութեան իշխանութեան, մի հզօր եւրոպական երկրագործական պետութեան տակ, որի միակ գործը պիտի լինէր այս գւառառի համար երկրի ուսումնական պետութեան իշխանութեան, մի հզօր եւրոպական երկրագործական պետութեան տակ, որի միակ գործը պիտի լինէր այս գւառառի համար երկրի ուսումնական պետութեան իշխանութեան, մի հզօր եւրոպական վերաբերեց արուելով սակայն երեք մտածող չեղաւ, երկրի վարիչներից ոչ ոք չզիջաւ միջոցներ ձեռք առնելով կուլտուրան գաւառում զարգացնել, բարեւքել երկրամշակի տնտեսական վիճակը: 1835 թուից մինչեւ 1915 թ., ութիւնուն տարի շարունակ 8 տարի ինքնակալ եւ բացարձակ իշխանութիւնը տարեկան 1 ից մինչեւ 15 միլիոն բուրլ ուսկեդրամ է ծախսել Ալեքսանդրապոլի բերդի, մարտկոցների, զօրանոցների, մլեբրանոցների, ճանապարհների, հրետանիների եւ ուրիշ ուազմական սպառազնութերի համար, բայց երբեք չի զիջել միայն մի կամ առ առաւելն երկու միլիոն բուրլի ծախսելու, որպէս զի բարեւքէ Շիրակի 190 գիւղ սակաւահող, աշխատաւորի վիճակը, որ գատապարտած էր ծայր աստիճան չքաւորութեան ժանիքներում տանջուելու:

Շիրակի գիւղացին, 1886 թ. վիճակագրութեան համաձայն, ամէն մի անհատին մի քառորդ գեսիհատին (2400 քառակուսի մետր) ցանքսի, արօտի եւ բնակարանի համար հող ունէր: Կարելի է մակարերել, թէ ինչ գժուար կացութեան մէջն էր գիւղացին, այսպան սակաւ հողով, այն էլ անջրդի եւ շատ տարի ենթարկուած չորութեան եւ ուրիշ պատահարների, եւ այս պատճառով աշխատող ոյժերի ստուար մասը պարտաւորուած էր ճանապարհների վրայ քարկոտելով փող վաստկելու, որպէս զի իր ընտանիքի համար Ռուսաստանից բերած ալիւր գնէ եւ պետական հարկերը վճարէ:

Շիրակի ուոզման եւ երկրի տնտեսական բարեւքման ծանր պարտականութիւնը յանձն առաւ Հ. Խ. կառավարութիւնը եւ նա ամէն խոչնդու արհամարհելով՝ գործը առաջ տա-

րուած, ամայացած մայր երկիրը, այս ինչ գտած ինքնավարութիւն, կը ծովի ինքնօգնութեամբ վերաշնուրի, ծաղկի եւ բարգաւածիլ անդրէսածին ժողովրդեան բարակորութեան, զարգացման եւ վայելրի համար: Կուրախակցինք, կողունենք սիրով եւ ոյժ եւ յարաւետութիւն կը մաղթենք մեր անսկոնջ գործիչներուն: Խմբագրութիւն “Հանդիսին”.

րաւ։ Հ. Խ. Կառավարութեան վարիչները մեծ հրճուանքով ահա մի տարի է, որ անսպասելի եռանդով առաջ են մղում այս հսկայական գործը եւ անկասկած առաջիկայ 1924թ. ամառը Շիրակի ջրանցքը պիտի ոռոգէ 15.000 գետիա տին տարածութեամբ արտերն ու ագարակները, որի հետեւանքով հողագործի մինչեւ օրս ձեռք բերած արդիւնքը պիտի տասնապատկուի։ Միայն երկրաշակը գիտէ գնահատել ոռոգման նշանակութիւնը իր ցանքսերի համար, ամբողջ գա-

առուն պիտի երկարացնի, որ ոռոգելիք հողերը զրէ, Սեպտեմբերի 1ին յատկապէս գնացի ներքուղիները զննելու, Ամբարտակի բուրջերը տեսնելու, տասն ամսնան մէջ կատարւած գոլ ծըլ վերստուգելու։ Ականատես ամէն ինչ քննելուց յետոյ, հասայ այն եղրակացութեան, թէ երեւակայածից հինգ-տասն անգամ աւելի եռանդով եւ անձնազոհութեամբ առաջ է տարուած գործը, եւ ոչ մի ջանք չէ խնայուած շուտափոյթ աւարտելու այս խիստ օգտակար աշխատանքը, որը պիտի



ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԻԱՆ

(Միջտևող՝ Էսայեան, ասխագան. աջ՝ Տէր-Աստուածատրիւան, մարտարապետ.  
ձախ՝ Ցովսեկիւան, քարտուղար.)

ւառը անձկութեամբ սպասում է այդ հսկայական գործի վախճանին, որը Շիրակի համար ամենաէտական կենսական խնդիրն է։

Որքան մեծ է ոռոգման տալիք բարիքը, այնքան եւ աւելի մեծ է ջրանցքի կառուցման խնդիրը։ Զուրը — ջրանցքի առուն պիտի բարձրացնեն Արփաչայից, կապս գիւղի մօտից, որն Ալեքսանդրապոլի հիւսիսային կողմն է, 12 կիլոմետր երկարութեամբ։ Բայց Արփաչայ վտակը կապս գիւղի մօտ 35 մետր եւ աւելի խոր ձորի մէջ է, որտեղ սարահարթի տակով, մօտաւորապէս երկու կիլոմետր ու մի քառորդ երկարութեամբ ներքնուղիով (տուննել) նախ պէտք է անցնի մինչեւ Շիրակի դաշտը եւ ապա քառասուն կիլոմետր երկարութեամբ ջրանցքի բաց

փրկէ ոչ միայն ժողովուրդի տնտեսութիւնը պատահաբներից, այլ պիտի խրախուսէ աւելի մեծ, աւելի տիտանական գործերի ձեռնամուխ լինելու։

Արփա-չայը դուրս է գալիս Արփա լճից, ( $41-15^{\circ}$  լայնութեան աստիճանից), որը ոչ միայն ջրառատ է, այլ Ագ-բարի եւ շրջակայ լեռներից իջնող ջրերն այնպէս են ուղղուած եւ գասաւորուած, որ անսպառ ջուր են հայթայթելու լճակին, որից ջուրն է վերցնում վտակը։ Ագ-բար (Բարձր Դուռ) լեռը բազմաթիւ աղբիւներ եւ առուներ ունի, խոտաւէտ լանջեր, մարգեր, ուր բազմաթիւ հօտեր են արածում գարնանից մինչեւ աշուն։ Սարի գագաթը իր մի քանի աղբերակերով (Ախտականիթ), որտեղերում շատ հին դարերից շինուած

են աչկարարեան որմեր, որոնք այդ ջրերին ընթացք են տալիս գեպի ի Արփա լիճը։ Վտակը նախ ուղղում է գեպի արեւելք, հարաւ-արեւելք եւ ապա իջնում է գեպի հարաւ, անցնելով կամսուտ եւ կարմրիկ լեռների միջից, ընդունելով շրջակայ բոլոր առուակների ջրերը եւ հասնում է կապս, որը Արփա լճից մօտաւորապէս 40 կիլոմետր երկարութիւն ունի։ Կապսից ուղիղ հարաւ ուղղուած վտակն իջնում է Մարմաշէն, Գիւմրի եւ Ղազար-Աբադ գիւղի մօտ միանում է կապսից եկած Ռահհ վտակին, որոնք երկուսը

կապս գիւղի հիւսիս արեւմտեան կողմից Արփա չայը փորել իջել է սարահարթը աւելի քան 30 մետր խորութեամբ, անցնում է ջրերի փորած խրամատով, որի լայնութիւնը 20—50 մետր է ցածրից վեր։ Այս ձորի ուղղահայեաց ժայռի կողերը հրաբխային են (բազալտ) որձաքար քարերից կազմուած որ մանիշակի վառ գոյն ունին, խիստ մանր ատոմներով, որը կարելի է յլկել գրանիտի նման։ Այս բազալտը գրանիտից շատ կարծր է եւ անհամեմատ դիմաց կուն եւ տարածւում է սարահարթի տակ աջ ու ձախ՝ մղոններով։



Այսիաշայը և Շիրակի ջրամցրի ամբարտակը։

Միասին Ախուրեան վտակը կազմելով իջնում են Անի, Բագարան, Երուանդակերտ եւ հասնում միանում են Արփաին։ Կապսի մօտ սրընթաց ջրի ծաւալը Սեպտեմբերի մէկին, ջրերի ամենանուազ ժամանակ մօտաւորապէս  $1\frac{1}{2}$  քառակուսի մետրի չափ անցքից արագութեամբ լիք։ Լիք սահում էր, իսկ ամառւան ամիսներում 2—3 քառակուսի մետրից աւելի ջուր կարող է մատակարարել, այնպէս որ ոչ թէ 15 հազար գետիատին, այլ կը կին անգամ աւելի արտերի եւ ագարակների կարող է բաւարարել, եթէ հնարաւոր լինէր ջուրը քիչ աւելի բարձր գիրքից վերցնել, բայց տեխնիքական գժուարութիւնները արգելք հանդիսացան աւելի բարձրից տանելու եւ ստիպեցին այսպանով բաւականանալ։

Խրամատի սրակող ժայռերի կրծքին քիչ հարթուած կերման (zigzag) կածաններից ցածրացայ առուակի ափը, որի սրընթաց հոսանքը շառաչելով եւ փրփրալով իջնում է իր ընթացքը բռնող ապառաժներին բախուելով, ճշալով եւ մաշիլով նոյն իսկ բազալտի ժայռերը։ Արդէն խրամատի բարձունքից նկատելի էր առուակի աջ ափում ջրին նոր ընթացք տալու համար պատրաստուած փապուղին (tunnel), ուր Արփաչայը մտնելու է ժայռի մէջ պատրաստուած աղեղնաձեւ այդ մոթ անցքը եւ 70 մետր ցած հեռաւորութիւն/ց դուրս է գալու, որ իր նախկին փորած հունը զլորուի, որպէս զի ձախ ափին ազատուի ջրի հոսանքից եւ հնարաւորութիւն տայ բանւորներին քրանցքի ներքնուղու

սկզբնական ամբարտակը փորելու, բուրջը կապելու եւ ջրի ընթացքը կազմակերպելու։ Այս անցքը ներկայիս միայն ջրի ժամանակաւոր ընթացքին է ծառայելու, իսկ ապագայում պիտի օգտագործեն աւելորդ ջրերին ճանապարհ տալու, կարեւոր դէպքում, ներքնուղու մէջը մաքրելիս ջրին հին ընթացքով ցած թողնելու։

Ներքնուղու այդ ամբարտակը մի-երկու ամսի գործ է, գրեթէ վերջանալու է շատ մօտ օրերում։ Ամբարտակին կից ներքնուղին 50 մետր երկարութեամբ արդէն սրբատաշ բազալտ քա-

շերի վրայ, այդպէս էլ անդադար քորում են ներքնուղին վեց տեղերից։ Ներքնուղու ապաւոաժի մէջ 10—12 ծակ են փորում, ամեն ծակ 25 միլիմետր տրամագով եւ 75 սանտիմետր երկայնութեամբ, ապա լցնում դինամիտով եւ ելեկտրական հոսանքով պայթեցնում են։ Ամեն մի պայթումից գրեթէ մի մետր խորութեամբ ծակւում է ներքնուղին, որի քարի մանրուքը դուրս են թափում սայլակներով եւ շարունակում են փորուածքը։

Թէեւ խտաօդ ճնշիչ եւ շարժիչ (com-



Արդաշայը և Շիրակի ջրամցքի ամրատակի տեղը։

րով եւ ցեմենտով կողւած ու կամարւած է։ Անցքի — ներքնուղու այն մասը, որ տեղ կողերն ու կամարը բնական ապառաժից են, կարծր քարերի մէջ փորուած, փլուելու եւ թափուելու վտանգ չի սպառնում, այդ տեղերը արհեստական կող ու կամար չեն շինուելու, իսկ փուխր քարի, կաւի, աւազի շերտերից անցած մասը սրբատաշ բազալտով պիտի կողուին եւ կամարուին։ Արդէն շատ տեղեր կամարուած կողուած է ներքնուղին եւ անընդհատ տաշում, պատրաստում են քարերը, որ լրացնեն պակաս մնացած տեղերը։

Ամենամեծ եռանդով անընդհատ շարունակում են աշխատանքները, ինչպէս ամբարտակ ընդունաբանում, վտակի ափին շինուած բուր-

presseur) եւ ծակիչ (perforateur) մեքենաները պահանջուած էին արտասահմանից ներկայ թուականի փետրուալ ամսից։ Բայց այդ մեքենաները ուշ հասան եւ միայն Սեպտեմբերի 1ին դրանցով կատարուեց առաջին փորձը։ Հինգ րոպէի ընթացքում 25 միլիմետր եւ 75 սանտիմետր խորութեամբ բազալտ քարը ծակում է այդ մեքենան, որպիսի աշխատութեան համար մինչեւ այժմ երեք մշակ էին բանում, երկու ժամ վատնում։ Այժմ ներքնուղին պատրաստելու աշխատանքը շատ թեթեւացած է, չորս հինգ անգամ աւելի քիչ ժամանակ է հարկաւոր մեքենայով փորելու համար եւ անշափ գիւղացած է, խտաօդ շարժիչ եւ ծակիչ մեքենաների գործածութեամբ։

Արփաչայից սկսուող այս ներքնուղին 1260 մետր տարածութիւնից յետոյ, դուրս է գալիս կապս գիւղի արեւելեան հիւսիսային ձորակը, որտեղ 50 մետր տարածութիւնից յետոյ, նորից մտնում է կապսի ձորակից Շիրակի դաշտը տարածուած երկրորդ ներքնուղին, որը գրեթէ մի կիլոմետր երկարութիւն ունի: Այս տունէն արդէն ամբողջապէս բացուած է, մեծ մասամբ կողուած ու կամրուած է, այժմ պատրաստելու են ջրանցքի հունը ցեմենտով: Այս մասը մի ուղղահայեաց գծով ծակուած է բարձունքից եւ իջեցրած է մինչեւ ներքնուղու հորիզոնական գիծը, ներքնուղուց դուրս գալուց յետոյ բաւական տեղ արդէն ջրանցքի առուն եւ հունը պատրաստուած է. շարունակում են աշխատութիւնները:

Արփաչայի ափից, ներքնուղու սկզբանական ամբարտակից չորս հարիւր մետր հեռաւորութեամբ գէպի կապսի ձորակը մի ուղղահայեաց փորուածքով իջած է — ներքնուղու հորիզոնական գիծը, որպէս զի այդ տեղից փորուածքը շարունակուի գէպի Արփաչայ եւ գէպի կապսի ձորը եր-



Կապսի ձորի ներքնուղու դերամը:

կու խմբակ աշխատաւորներով: Այս ուղղահայեաց գիծը 52 մետր իջած է երկրի երեսից, մինչեւ ջրանցքի ընթացքը: Մի երկրորդ ուղղահայեաց փորուածք, նախորդից 300 մետր գէպի կապս, կամ Արփաչայից գէպ կապս 700 մետր հեռաւորութեան վրայ, իջեցրած է 40 մետր եւ դարձեալ երկու կողմից ուրիշ երկու խումբ փորուած են ներքնուղին գէպի Արփաչայ եւ կապս, գործը արագացնելու համար: Այս ուղղահայեաց փորուածքների վրայ յարմարեցրած են վերելակներ, որոնցով վեր են քաշուած փորուածքի միջից քար, աւազ եւ հող շատ յաշողութեամբ: Այս 1200 մետր երկարութեամբ ներքնուղուց գրեթէ 260 մետրն արդէն ծակուած է, իսկ շարունակութիւնը ձմեռս ան-

շուշտ կը վերջանայ: Մի կողմից փորուած են, միւս կողմից ազատուած մասերն իսկոյն կողըւմ եւ կամարուած են մեծ եռանդով:

Գործը հսկայական է, աւելի քան 500 գործաւոր զբաղուած են միայն ներքնուղու փորուածքով: Վարչութիւնն ունի իր սայերը, կառքերը, ձիերը, եղները, օրոնք օժանդակուած են աշխատանքին: Վերելակների ճախարակները դարձնուած են եղներով, սայերով կրում են ցեմենտը, կիրը, աւազը, փայտը, քարը եւ կարեւոր երկաթեղէնները: Կառքերը տանուած են ու

բերուած այլեւայլ նիւթեր, գլխաւորաբար ուտեստ եւ այլ կարեւոր մեքենաներ գործի համար: Օդախիտ մեքենան արդէն գործում է, ելեկտրական մեքենան, հոսանքի եւ լուսաւորութեան համար կազմուած էին: Նյոնպէս մեծ եռանդով առաջ են տանուած դաշտային ջրանցքի աշխատանքները:

Այս ջրանցքի գաղափարը յղացուած էր 1870 թ., բայց ով էր լսողը. կառավարութեան չինովմիկները չեին գալիս երկիրը բարեկարգելու, այլ ազգաբնակութիւնը կողոպտելու, ճնշելու, որ անհե-

տացնեն եւ նրանց հողերի վրայ ուուս գաղութներ բերեն: Զեին էլ ամաչում չինովնիկները եւ բացարձակ այս մոքերն յայտնուած էին: 1908 թ. ինդրագիր ներկայացրի ղետրոգրադ մինիստրութեան եւ ինդրեցի, որ Սարդարաբատի անապատէն 15.000 գեսիատին հող տան ինձ, որ ոռոգեմ եւ յանձնեմ գիւղացիներին այն պայմանով, ինչ պայմանով որ կառավարութիւնը նրանց տալիս է անջրդի հողերը, այսինքն գեսիատինից միայն 3 րուրլի ջրի փող ստանալու պայմանով: Յայտնի բան է որ ոռոգուած եւ մշակուած հողից պետական գանձարանն էլ ամէն մի դեսեատինին 3 րուրլի հարկ ստանալու էր: Ես պիտի ոռոգէի հին ջրանցքը վերաշնելով, որը միլիոն բուրլուց շատ աւելի

կը նստէր, եւ արդէն Եւրոպայում դրամագլուխ խոստացել էին տալ այդ գործի համար: Այնպիսի պայման էի առաջարկել, որ կասկած չունեի թէ կառավարութիւնը պիտի տար, քանի որ մինչստրներից մի երկուսը մասմամբ խոստացել էին ինձ օգնել: Մի տարի յետոյ խնդիրս վերադրձրին պաշտօնական գրութեամբ յայտնելով թէ այդ հողերը պիտի յատկացուին ոռւսական գաղութի բամբակի մշակութեան համար:

1890 թուին, երբ Ալեքսանդրապոլի քա-

որը կազմեց ուրուագիծ, բայց 1917 թ. երբ քաղաքային վարչութիւնն անցաւ Գաշնակցականների ձեռքը, կօպերատիւի տնտեսած գումարն էլ կուլ գնաց եւ երկրամշակ աշխատաւորի բաղձանքը խեղդուեց նրա կրծքի մէջ: Իսկ Հայաստանի վարչութիւնը երբ յանձնուեց Խորհրդային իշխանութեան, նրա առաջին եւ անմիջական գործն եղաւ ընդառաջելու երկրամշակներին եւ կենդանացնելու Շերակի մեռած արդիւնաբերութիւնը: 1922 թ. այդ հին ծրա-



Նորքառողյա կողուած և կամարուած մոռաքը  
նոյնպի ժեղակի դաշտը և քաղաքը:

զաքային ինքնավարութեան ծրագիրն իրականաւնալու վրայ էր, արդէն շատերը մտածում էին ամենից առաջ Շերակի ջրանցքի հարցը առաջ տանել: Քաղաքային վարչութիւնը կազմակերպուեց յետոյ, մի քանի անգամ ջրաբաշխ երկրաշափներ հրաւիրուեցան, ծրագիրներ կազմակերպուեցան, բայց գործը կազում էր, քանի որ դրամ գտնելու հնարք չկար: 1916 թ. երբ Ալեքսանդրապոլի քաղաքային կօպերատիւը կարողացել էր 5—600 հազար ըուբլի գումար շահել քաղաքացիներին ծախուած մթերքից, ամենքն էլ մեծ հաճոյքով այդ դրամը փոխանակ իրար մէջ բաժանելու, յատկացրին ջրանցքի շինութեան եւ քաղաքագլուխ կամսարականը հրաւիրեց ջրաբաշխ ինժենէր Զավալաշլին,



Արդիա չայի ափին, ջրի կողմեակի անրքառողյան  
նոր:

գիրը որոշ փոփոխութիւններով վերակազմեց Պետրոգրադի ճարտարապետական հաղորդակցական համալսարանից աւարտած ճարտարապետ Յովսէփ Տէր - Ասոտուածատրեանը, որն ահա մի տարի է յաջող կերպով եւ մեծ եռանդով առաջ կը վարէ գործը:

Հայաստանի խորհրդ. կառավարութիւնը իր ջանքն ու տնտեսած կոպէկները չխնայեց մինչեւ օրս շուտափոյթ աւարտելու այս փրկար գործը, որին սպասում է Շերակի երկրամշակը եւ պետական այս ճգնաժամին չճնշուեց ու առատութեամբ մի տարւայ ընթացքում 700.000 ըուբլի ոսկի փող ծախսեց ջրանցքի վրայ եւ անխոնջ աշխատում է առաջ վարելու մինչեւ աւարտը: Բայց Շերակի ջրանցքը միակը

շէ. որի վրայ այժման դրամ դրեց 1922—1923 թթ., այլ այդ ժամանակամիջոցին մաքրեց, յարդարեց, տեղ տեղ վերանորոգ եց եւ վերաշնեց էջմիածնի ըրջանի եւ Երեւանի գաւառի Շահումեանի եւ Լենինի անուան յատկացուած ջրանցքները, Գառնիի ջրանցքը եւ ուրիշները, որով մեծապէս նպաստեցին երկրի մշակութեան, եւ գեռ շարունակում է: Նշոյնիսկ Արագածի փեշեր/ց ջրանցք են տանում Արդարաբատի անապատը, որտեղ մտադիր են օրբերի համար

բարւոքելու եւ անջրդիները ոռոգ ելով հնարաւորութիւն տալու հետո միայն նախկին բնիկ ժողովրդին, այլ վերագաղթածներին, որոնք աշխատանք են փնտուում, մշակելի հողեր են որոնում, որպէս զի փրկեն իրենց ընտանիքները, որոնց հազիւ հաղաղատել են բաղդի անողոք ճիրաններից:

Այս եռանդով ներկայ դարի աշխատաւորութիւնը կանգնած է այն շաղի վրայ ուր եսթանասուն դար առաջ, երկրամշակութեան բազմապիսի արտաբերութիւններով արբած ժո-



Վ Ե Ր Ե Լ Ա Կ

(որով 80 մետր ցածրից վեր և բերում քարույթիա):

Մի նոր աւան շինել, որտեղ մտադիր են օրինակելի յարմարութիւններ տալ այդ բնակավայրին, որպէս զի դրացի գիւղերն ու աւանները ընդօրինակեն քաղաքակրթութեան արտադրած օգտակար յարմարութիւնները:

Բայց այսպանով չի կարող բաւականանալ Հայաստանի աշխատաւորների իշխանութիւնը, նա ձգտում է աւելի մեծ ջրեր բերել երկրի ամէն կողմէ, որպէս զի սակաւահող գիւղացին կարողանայ այնպիսի բերքերի մշակութեամբ պարագել, որ հնարաւորութիւն ունենայ կշտացնել իր բազմանդամ եւ բեղմնաւոր ընտանիքին: Խորհրդական Հայաստանի կառավարութիւնը այսօր կանգնած է այն ուղու վրայ, որ անվերջ մտածում է միջոցներ գտնել, անապատները

լրացրդը Արագածի, Գառնիի, Մասիսի, Կերրովդի, Քարդողի, Վարագի եւ Կազմանքերի լանջերին կպած պատառում էր լեռների լանջերն ու կողերը, ջրանցքներ էր փորում, ջրին ճանապարհ էր բաց անում դէպ իր հանդերն ու ագարակները, ուոգելու ցանկսերը եւ ծաղկեցնելու նայիրի երկիրը: Կարծես թէ լճակների մէջ գարաւոր քնից զարթել են վիշապամայրերը, օձերից մարակ շինած աշխատաւորին մղում են դէպի այն բազմաթիւ լճակները, որտեղերից սկիզբն էին առնում մեր գետերն ու ջրանցքները, ցանկանում են վերանորոգել վիշապազանց դարը եւ անապատները դրախտի վերածել: Հայաստանի Խ. կառավարութեան զարգացման կառքին լծուած աշխատաւորները, սկսեալ ամենաբար-

ձրից մինչեւ ամենայետին բանուորը մի նշանաւանի են ձգւում, բարւգել կեանքը այնպիսի յարմարաւորութիւններով, որ քաղցրանայրնակը ըռլթեան անտանելի վիճակը: Թաթարական հորդաների աւերածութիւնից, խալիքաթի անսահման կեղեքումներից եւ ցարլ/զի այլանդակութիւններից աղատուած երիտասարդութիւնը հսկայական քայլերով եւ հերոսական ջանքերով տենչում է աւերակները վիճանորոգել եւ կեանքը տանջանքներից վրկել: Խիստ բարդ եւ մեծ բեռէ զրուած Հայաստանի աշխատաւորների թիկունքին, գեռ նրանց սպառնում են աւելի ընդարձակ եւ ծանր աշխատանքներ: Անհրաժեշտ է կարգի բերել այն բազմաթիւ ջրանցքներն, որոնք պեղուել են ոչ թէ Ուրարտական կամ Մաննայի շրջաններում, այլ աւելի վաղ, աւելի կանուխ, Սոմմեր-Ակագների շրջանում, որոնք երկար ու ձիգ տարածուած են եղել լեռների լանջերից մինչեւ գաշտերի ստորոտները եւ գետերի ափաւնքը: Այնպիսի ջրանցքներ, որոնք շինուել յարդարուել են այն ժամանակները, երբ շինուում էին Եփրատի, Տիգրիսի եւ Տարուի դաշտերում տարածուած բազմաթիւ ջրանցքները: Բայց սրանց մասին ուրիշ անգամ:

15 Սապտ. 1923,  
Աշուամադուապու:

ԱՑՐՈՒԾ



## ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ

Էջմիածնի միարան, բանասէր եւ հնագէտ գարեգին Եպիստի Յովսէփեանի, լեզուարան Գր. Ղափանցեանի և Նկարիչներ Արշակ Գէթվաճեանի ու Վըթ. Ալիկէնանի հետ, 1917 թուի Յուլիսին Էջմիածնից ճանապարհեցինք գէպի Բագրատունեաց երեխմի մայլաքաղաք, իսկ այժմ աւերատի Անի, մի շարք ուսումնասիրութիւններ կատարելու համար:

Գնացքը կանգնեց Անի կայարանում, որտեղից մինչեւ քաղաքը եօթ վերստ է (Եօթքիլութը): Մեր իրերը մի սայլի վրայ դարսելով կայարանից ճանապարհւեցինք գէպի Անի: Արեւածագից առաջ ճամբայ լնկանք. Ալագիազի զով հովք փչում էր Մանթաշի ձորերից: Սիրտ լցուած էր «Հին հին դարուց յիշատակ»ներով: Քանի յառաջ էինք գնում այն-

քան ես յուզում էի: Մի բլուր եւս, եւ ահա երեւում է Անին, իւր կիսակործան պարիսպներով, պալատներով եւ տաճարներով, որոնց ի տես ուղեւորը յիշում է այն երգերը, որոնք մեր ժողովուրդը ձօնել է իւր սիրելի Անին:

Իջանք Ախուրեան գետի ափը նստեցինք նաւակը եւ գուրս եկանք Անիի պարիսպների տակ, որտեղ նստել հին Շիրակի գիւղերի հայ աշուղները եւ Անիի գովկերն էին ձայներգում, ուղեւորներին եւ յուղելու եւ ոգեւորելու համար: Գեռ թարմ են յիշողութեանս մէջ կյուր աշուղի տիսուր երգի այս տողերը.

«Անի, Անի, ջան Անի,  
Քանդողիդ տունը քանդուի,  
Մի ազգը, որ քեզ չը պահեց,  
Մէկ լացողը իր լացովը ինչ անի...»

Ես առաջին անգամն էի տեսնում Անին, ուստի եւ իմ վրայ վեխն աստիճանի սքանչելի տպաւորութիւն թողին նախ՝ պարիսպները — հսկայանիստ, ամրակուռ, բարձրասլաց եւ խորհրդաւոր պարիսպները Անիի, որի ահազդեցիկ լուռ եւ ամայի տեսքը փշաքաղում են ականատեսի մարմնը: Վրդէն մոել ենք քաղաքը: Ճամբու երկու կողմերի վրայ թափթուած քարերը, որոնք սրբատաշ եւ ձեւաւոր են, համարգրուած են: Զգում եմ, որ մի նոր, խնամող ձեռք կայ այս աւերակների մէջ, որոնց ի տես սիրտս ոչ թէ աւերատ է դառնում, այլ հպարտութեան, պարծանքի եւ յոյսի նոր կառուցուածք է ստանում: Համեռում ենք Անիի մայր եկեղեցու մօտ. Հոչակաւոր կաթուղիկէն կարծես թուշել կուղէ դէպի վեր. Նուրբ եւ բարձրանայեաց կամարները գոմեական սլացք ունին: Իջնում ենք Անի առաջնորդարանը, որտեղ մեզ հիւրընկալում է 25 երկար տարի այս աւերակների վրայ իրեր պահապան նստած Միքայէլ վարդապետը — մի զուարձախօս, բարի եւ աղնիւ հայ հոգեւորական — որի ամբողջ ստացուածքը մի աւետարան էր, մի ձեռնափայտ, մի զինուտիկ եւ բաժակ եւ հացի տոպրակ, որոնք Նրա խուցի ամայութիւնը կարծես զարդարում էին:

Իւր սովորութեան համաձայն այդ ամսուն (1917) եւս այնտեղ էր եկել մեծանուն եւ վաստակաւոր հայագէտ-զիտնական Պրոֆ. Նիկ. Մատուր, իւր աշխատակիցներով: Անիի հարաւակողմը, Միջնաբերդին մօտիկ շինուած էր Պրոֆ. Մատուրի բնակարանը, Ախուրեանի քարափի վրայ: Այն փողոցը, որ Պրոֆ. Մատուրի բնա-